

ձեռքի տակ պահել: Յետոյ զայն ղրկեցին Գալազ՝ պայման դնելով որ այդտեղ բնակի եւ հաւատարիմ մնայ օսմանեան իշխանութեան: Սակայն, Սան-Մահմուտը շատ չանցած ապրատամբեցաւ: Անոր անձնատուութիւնը բաւական տատանում առաջացուցած էր այն բէյերու մէջ, որոնք չգտնուելով Բէյերիսիանի անմիջական ղեկավարութեան տակ, խօսք տուած էին զաշնակից հանդիսանալ անոր գործողութիւններուն: Սան-Մահմուտի ապստամբիլը տեսակ մը յայտարարութիւն էր քերդերուն, որ թըրքական կեղծ խոստումներուն անկարելի է հաւատալ:

Թրքական կառավարութիւնն իր պատրաստութիւնները տեսած էր արդէն: Ու նկատելով որ Բէյերիսիան բէյի կողմած դաշնակցութիւնը դուտ աշխրէթական-զինուորական վտանգէ մը աւելի քաղաքական խոչոր սպառնալիք մը կը դառնար Թուրքիոյ դէմ, ձեռնարկեց զինուորական մեծ արշաւանքի մը, որու ընդհանուր հրամանատար կարգուած էր յայտնի Թօփալ Օսման փաշան: Այս արշաւանքը իր բնոյթով եւ խտութեամբ կը գերազանցէ նախորդ զինուորական արշաւանքները եւ նշանակալից է թէ՛ պատերազմական եւ թէ՛ քաղաքական տեսակէտներով:

Նախ, ծանօթանանք Բէյերիսիան բէյի քաղաքական ծրագիրներուն եւ անոր զաշնակից հայ զինուած ուժերուն, որպէսզի աւելի պարզ ըլլայ թէ ինչո՞ւ թրքական կառավարութիւնը նման վճռական պատերազմական գործողութեան մը ձեռնարկեց:

\* \* \*

Բէյերիսիան բէյի ուժեղացումն ու տարածումը պարզ աշխրէթական քաջագործութեան մը երեւոյթներէն չէր, այլ գերազանցապէս քաղաքական-ազատագրական շարժում մըն էր, որ դուտ քրդական իր բնոյթէն դուրս դալով՝ հայ-քրդական դաշնակցութիւն մը կը դառնար: Անշուշտ, խօսքը այն հայերու մասին է, որոնք զինուած ուժեր էին եւ կը գտնուէին Բէյերիսիան բէյի եւ Ալատին բէյի շրջաններուն մէջ: Բէյերիսիան բէյը կը դառնար իսկապէս այն քրդերը իշխանը, որու դալստեան կը սպասէր քրդերը մեծ բանաստեղծ Ահմէտ Հանին, որու

բանաստեղծութեան մէկ նմոյշը մենք տուինք ստալին գլուխին մէջ:

Հոս տեղն է ըսելու, որ 17-րդ դարու այդ նշանաւոր գրողը (ծագումով Հէքեարեցի) եղած է պաշտօնական բանաստեղծը ձէյիրէ-Բոհթանի իշխանապետութեան, ուր տիրող դէմքերը Բէյերիսիան բէյի մեծ հայրերն էին: Նոյնպէս, յիշատակութեան արժանի է այն պարզան, որ Ահմէտ Հանիի երկի ամենէն հին ձեռագիրը սերունդէ սերունդ ժառանգութիւնը մնացած է մինչեւ այսօր Բէյերիսիան բէյի տան, ուր մեծցող երիտասարդները կարդացած ու ներշնչուած են անոր ոգիով:

Կասկածէ դուրս է, որ Բէյերիսիան բէյն ալ ներշնչուած էր քրդական անկախութեան եւ հզօրութեան այն իտէալէն, որ Ահմէտ Հանիի գրչին տակ այնքան ջերմութեամբ արտայայտուած է: Դժբախտաբար, այդ ժամանակուան գործերը եւ ծրագիրները գրաւոր փաստաթուղթով մը մեզի հասած չեն: Ուստի ստիպւած ենք գոհանալ բերանացի տեղեկութիւններով, որոնք նոյն բանը կը հաստատեն, ինչ որ կը տեղեկացնեն Բէյերիսիան բէյի այսօրուան թոռները: Այդ ուղղութեամբ իմ հաւաքած տեղեկութիւնները ըստ ամենայնի կը համապատասխանեն այն ծանօթութեան, որ կուտայ Յակոբ Շահպաղեանը իր «Քիւրդօ-Հայ Պատմութիւն» գրքին մէջ:

Ահա այդ հատուածը.—

«Որովհետեւ արդէն Բէյերիսիանը գորացած էր, եւ իր զօրութեան մի մասը բնական էր որ փնտռէր հայ իշխաններու համաձայնութիւնը ձեռք բերելուն մէջ, եւ հայ իշխանները չի գիտցուիր կամայ թէ ահամայ, համաձայնութեան եկած էին Բէյերիսիան բէյին հետ, գուցէ սպասելով վերջին առիթներուն: Պատմական փաստերը համեմատութեան դնելու համար աւանդութեան հետ, առաջ կը բերենք այս պարզապէս՝ ինչպէս խօսուած է:

«Բէյերիսիան բէյը իր ծրագիրը գրած էր պարզ եւ պարտաւորիչ: Իր իշխանութեան խիտ ծաւալը պիտի ամփոփէր իր մէջ Վան, Պիթլիս, Մուշ, Տիարպէքիր՝ մինչեւ Ուրմիոյ շրջանը: Արտաքին պաշտպանութիւնը ձեռք բերելու համար՝ իր եւ քրդերուն ինկած բաժինը՝ որոշած էր որոնել պարսից պաշտպան